Արդշինբանկ

№ 640 - 8663

«01» հոկտեմբեր 2020թ.

Կարծիք

Նազելի Գառնիկի Սուքիասյանի ԺԲ.00.02 – Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված **«Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրները ՀՀ-ում»** վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի (բյուջե, հարկ, արժեթուղթ, արժույթ) ոլորտների ամենօրյա իրավախախտները վկայում են ՀՀ գործող ֆինանսական օրենսդրության բացերի, ինչպես նաև դրանց կիրառման անկայունության մասին, որոնց պատճառով այսօր ընդլայնվում է ֆինանսական իրավախախտումների աշխարհագրությունը, աճում է իրավախախտների թվաքանակը, օրակարգի խնդիր է դառնում ֆինանսական պատասխանատվության և վարույթի իրավական կարգավորման հիմնախնդիրների տեսական, օրենսդրական մշակման և գործնական կյանքի կոչման անհրաժեշտությունը:

Ֆինանսական պատասխանատվության և վարույթի իրավական հիմնախնդիրների գիտական հետազոտություններին ուղղված ցանկացած փորձ, որն ուղղված է

«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0015, Գր. Լուսավորիչ 13
(+37412) 222222
office@ardshinbank.am
www.ardshinbank.am

ֆինանսական իրավունքի տեսության և ֆինանսական օրենսդրության ժամանակակից պահանջներին համահունչ մշակմանը, ձեռք է բերում հասարակական և պետական լուրջ կարևորություն:

Նազելի Գառնիկի Սուքիասյանի «Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրները ՀՀ-ում» վերտառությամբ դոկտորական ատենախոսության թեման արդիական է, այն նվիրված է իրավական պատասխանատվության առանցքային նշանակություն ունեցող հարցադրումների համակողմանի հետազոտությանը: Ներկայումս ինչպես գործնական, այնպես էլ զուտ օրինաստեղծ գործունեության համակողմանի ուսումնասիրությունը թերևս, վկայում է այն մասին, որ նշված ոլորտը համարվում է ոչ միայն արդիական, այլև խիստ հրատապ, քանի որ ակնհայտ է դարձել առկա իրավակարգավորումների անհարկի ոչ իրավաչափ ու բազմաթիվ խնդրահարույց բաղադրիչների բացասական ներգործությունը՝ ոչ միայն վարչարարության բնականոն ընթացքի, այլև ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից:

Ատենախոսության առանցքը կազմում են չորս գլուխներ, որոնցում ամփոփված տասնհինգ ենթագլուխներում սպառիչ շարադրված են ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրների էությունը և հրատապ լուծումներ պահանջող հիմնախնդիրները, որոնց բացահայտումները վկայում են, թե որքան մեծարժեք է բարձրացված խնդիրների տեսական և գործնական նշանակությունը կոռուպցիայի և ֆինանսական իրավախախտումների դեմ տարվող պայքարի արդյունավետության բարձրացման գործում:

Ատենախոսության յուրաքանչյուր գլխի հետազոտական բացահայտումների արդյունքներն ամփոփված են տասնյակ եզրակացություններով և առաջարկություններով, որոնք ունեն թե՛ տեսական, և թե՛ գործնական կիրառման մեծ անհրաժեշտություն:

Գնահատելով ատենախոսության կառուցվածքի բովանդակային արժեքները, նկատենք, որ վերջինս ֆինանսահիրավական պատասխանատվության իրավական ինստիտուտին վերաբերող նյութական և գործընթացային իրավանորմերին վերաբերող նոր ֆինանսահիրավական հայեցակարգային դրույթներ են, որոնք առաջին

անգամ ֆինանսական իրավունքի գիտության ոլորտում առաջ են քաշվել աշխատանքի հեղինակի կողմից և բավարար բացահայտումների շնորհիվ լուսաբանում են մի քանի տասնյակ այնպիսի ֆինանսաիրավական ինստիտուտների իրավագիտության ոլորտում գրված տեղի, դերի և նշանակության հիմնախնդիրները, ինչպիսիք են ֆինանսաիրավական հարկադրանքը, սանկցիաները, ֆինանսաիրավական պատասխանատվությունը, ինչպես նաև ֆինանսական իրավախախտումների վարույթի բացահայտումներին ուղղված հետազոտությունները:

Հաշվի առնելով դոկտորական ատենախոսությունում հեղինակված բազմաթիվ իրավական հայեցակարգերի հիմնավոր դրույթները, գնահատելով դրանց գիտական արժեքները, գտնում ենք Նազելի Սուքիասյանի կողմից պաշտպանության ներկայացված դոկտորական ատենախոսության ուսումնասիրությունները և վերլուծությունները հիմք են հանդիսանում եզրակացնել, որ «Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.02 – Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությանը, որի հեղինակ Նազելի Գառնիկի Սուքիասյանին կարելի է շնորհել իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

«Արդշինբանկ» ՓԲԸ Վարչության նախագահ,
Ֆիզմաթ գիտությունների թեկնածու՝ Արտակ Անանյան